ւանդապահ էր, ինքը Տիգրանակերտ գացած՝ լսած էր, և որոց տունը գտնուած Աւետարանի յիշատակարանին մէջ ևս գրուած տեսած է։ Նա ինք պատմեց աւելի ընդարձակ՝ ժամանակով և անունով, զոր գրի առի։ սակայն այժմ հեռի վայր մի ձգուած լինելով՝ ստիպուած եմ նորա պարունակութիւնը համառօտ կերպով այս տեղ գրել, որպէս շատ մի գրուածներս։

ԽԶԻ

ՄԱՆԱԶԿԵՐՏԻ ՀԱՍԱՆ ՓԱՇԱ ԳԻՒՂԻ ՄԷՋ

Հասան խանի պատերազմներէն յետոյ Ալաշկերտի իշխանութիւնը կը վարէր Ապտիւլ-Համիտ բէկ։

Շեռեանայ գլխու իշխանութիւնը նաև կը վարէր Մամբռանցի Էմէր բէկ, որ այս տեղի հայերու հետ նաև կը կառավարէր իւր ցեղն։ սա արդարութիւնը պաշտպանող մի անձնաւորութիւն լինելով՝ հայ և քուրդ ժողովրդեան առջև մի պաշտելի անձնաւորութիւն դարձաւ, որով Համիտ բէկի նախանձն գրգռեց իւրեան դէմ։

Մի քանի սաստիկ ընդհարումներ տեղի ունեցան երկուքին մէջ։ Ապտիւլ-Համիտ բէկ բազմաթիւ զինեալ քրդեր պատրաստեց, որ Էմէրէն վրէժ լուծէ, գնայ նորա հպատակ հայերն գերէ։

Պատրաստութիւնը մեծ էր, Էմէր գիտէր որ չը-պիտի կարողանայ դիմադրելու և ժողովուրդն պաշտպանել։ Մի օր յանկարծ լուր տուաւ հայ ժողովրդեան։

—Իմ որդիք, Համիտ կռուի կը գայ, գիտէք նո-